ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյդոյան
ՀՎՀՀ՝ 02568394
ՊԳՎ՝ թիվ 211 171 01863
Հասցե՝ Երևան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 010-56-09-22, e-mail: foi@foi.am

Պատասխանող՝
«Հայաստանի Դեմոկրատական»
Կուսակցություն
Հասցե՝ Երևան, Փ. Բյուզանդի 1/3

19.06.2012թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ
Տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասին

1. Գործի մինչդատական նախապատմությունն ու փաստերը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ԱԺ ընտրություններին մասնակցող «ԲՀԿ», «Ժառանգություն», «ՀՅԴ», «ՀԴԿ», «ՀԿԿ», «ՀՀԿ», «ՄՀԿ», «ՕԵԿ» կուսակցություններին ու «ՀԱԿ» դաշինքին 25.04.2012թ-ին նախընտրական քարոզարշավ իրականացնելու ծախսերի վերաբերյալ «Տեղեկատվություն ստանալու հարցում» է արել: Հարցմանը կուսակցությունների մի մասը պատասխանել է, իսկ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը՝ չի պատասխանել: Վերջինիս ուղղված հարցումը հետևյալն է եղել. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» դրույթներով՝ ևս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

Նշված փաստը հաստատվում է հարցման և փոստային քաղվածքի օրինակներով:

16.05.2012թ-ին «Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում» է ուղարկվել, հետևյալ բովանդակությամբ. «Հարգելի պարոն Սարգսյան,

2012թ.-ի ապրիլի 25-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

3. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
4. Ծախսած գումարներից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մինչ օրս պատասխան չի ստացել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ ևս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները»:

Նշված փաստը հաստատվում է 16.05.2012թ. փոստային քաղվածքով և հարցման օրինակով:

Կրկնակի հարցմանը ևս պատասխան չի տրվել:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու« ստանալու« տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով[a] անկախ պետական սահմաններից»:
- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա»: Նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»: Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա

ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կուսակցությունը պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, մամուլում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն) և օրենքով նախատեսված դեպքերում դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաև սահմանված կարգով այն տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում»:

Վերը նշվածից հետևում է, որ ՀԿ-ի կողմից հարցված տեղեկատվությունը գաղտնի չէ, ավելին, բաց տեղեկատվություն է, իսկ Կուսակցությունն էլ պարտավոր է տարվա կտրվածքով այդ մասին մամուլով հրապարակել, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանողը չի տրամադրել գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի օրենսգրքի 2, 87 հոդվածներով՝

Խնդրում եմ՝

«Հայաստանի Դեմոկրատական» Կուսակցությանը պարտավորեցնել հնգօրյա ժամկետում տրամադրելու հայցված տեղեկատվությունը հետևյալի մասին.

1. «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞նն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:
3. Խնդրում ենք լուծել նաև պետական տուրքի և դատական ծախսերի հարցը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր.
2. Լիազորագիր.
3. Հարցումների օրինակները,
4. Փոստային քաղվածքներ,

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ-ի նախագահ՝ Շուշան Դոյդոյան